

ԵԿԵՂԵՑՒՈՅ ՄԻՈՒԹԻՒՆ (ՇԱՐ.)

Posted on July 14, 2015 by Keghart



Category: [Opinions](#)



Սոյն յօդուածի սկիզբը ընթերցելու համար խփեցէք [Եկեղեցւոյ Միութիւն](#).- Խմբ.

Ռսկան Մխիթարեան, Լոս Անճելըս, 9 Օգոստոս 2015

Վերադառնանք եկեղեցական կեանքի ա՛յլ ցաւերուն:

3. Թեմական հարցերու դժուարութիւններն ու կարգադրութիւնները, նամանաւանդ բաժանումները՝ միայն եկեղեցական խնդիրներ չեն, ընդհակառակը՝ անելի քաղաքական, որոնց արմատները շա՛տ խոր են մեր պատմութեան մէջ: Սահմանադրական կանոնադրութիւնները պէտք է յարգուին իւրանքանչիւր Թեմէ ներս: Թեմական մարմիններ, որոնք ընտրուած են իրենց ժողովուրդին կողմէ, պարտին որոշել այդ Թեմէն ներս կատարուելիք կրօնական-հասարակական աշխատանքները ըստ տուեալ կանոնադրութեան, եւ **Կաթողիկոս ու Առաջնորդ պարտին յարգել այդ Թեմի կանոնադրութեան տրամադրութիւնները**, առանց մերժելու ժողովրդավարական կարգն ու կանոնը եւ երբեք չփորձեն պարտադրել իրենց կամքը:

Թեմերը աւատապետական կալուածներ չեն եւ չեն ալ կրնար ըլլալ: Հայց. Եկեղեցւոյ ազգային-ներկայացուցչական նկարագիրը պարտաւոր ենք մշակել, զարգացնել եւ արժեւորել, առանց անոր տալու կղերապետական-մենատիրական հանգամանք, թէկուզ նման ախորժակներ ունեցող ղեկավարներ շատ են այս օրերուն:

Պարտք կը զգամ այստեղ անգամ մը եւս յիշեցնելու որ եկեղեցական-ընկերային-մշակութային կեանքէն ներս ստեղծուած ամիրայական տիրապետութեան կացութիւնը պատճառ դարձած է որ ժողովուրդի ճնշող մեծամասնութիւնը հեռանայ Եկեղեցւոյ կառոյցէն եւ չհետաքրքրուի անոր դարերու ընթացքին ունեցած օգտաշատ առաքելութեամբ: Ինչպէս անցեալին՝ այսօր ալ շատ մեծ են մեր ժողովուրդին ակնկալութիւնները Եկեղեցւոյ ղեկավարութենէն:

Ցաւալին հոն է՝ որ Հայ ժողովուրդը դեռ քաջութիւն չունի իր իրաւունքին տեր կանգնելու եւ պահանջելու այն ինչ որ իրեն կը պատկանի օրինական սահմաններու մէջ, իր արդար քրտինքով շահուած եւ օրինակացուած սահմանադրութեամբ: Ժամանակն է որ իր վրայէն թօթափէ ապականած եւ մենաշնորհեալ կարծեցեալ ա՛յն փոքրաթիւ «ջոջերը» որոնք Եկեղեցին վերածած են շուկայի եւ անհատական կամ այլ տեսակ շահեր հետապնդելու լաւագոյն դաշտի մը:

Տխուր է պատկերը ամենուրեք, որովհետեւ մեր գաղութները կը ղեկավարուին փոքրաթիւ, իրենք զիրենք մենաշնորհեալ կարծող անհատներով, որոնք ընդհանրապէս կը նշանակուին այդ պաշտօնին՝ կա՛մ զիրենք հովանաւորող կազմակերպութենէն եւ կամ կաթողիկոսէն: **Մեր բոլոր գաղութներու ընտրութիւնները ընդհանրապէս հակաօրինական են**, եւ կը կատարուին առանց ժողովուրդի ստուար մասնակցութեան: Հետեւաբար ժողովուրդը կը գրկուի իր կամքը արտայայտելու հնարաւորութենէն, որուն որպէս արդիւնք՝ կը հեռանայ ան իր Մայր Եկեղեցիէն:

Մեր Եկեղեցին, ինչպէս նաեւ անոր առընթերակից բոլոր բարեսիրական եւ կրթական հաստատութիւնները, պարտին դուրս գալ փակ հիմնարկ մը ըլլալու հոգեբանութենէն եւ ըլլան թափանցիկ հաստատութիւններ, կառչած ըլլալով օրէնքի իւրանքանչիւր տառին եւ տրամադրութեան: Ժողովուրդը որ ինքնին Եկեղեցին է, պէտք է յստակ կերպով հասկնայ, թէ իր

անտարբերութեամբ՝ միայն կը նպաստէ բոլոր անոնց, որոնք իրարու մէջ կը բաժնեն «ղեկավարութեան» պաշտօնները, եւ որոնք երբեք չեն նպաստեր ազգային ոգիի ծաղկումին եւ կարգ մը թեմեր կը պահեն պառակտեալ երկու առաջնորդարաններով ի նպաստ իրենց կազմակերպութեան եւ երբեմն ալ անհատական շահերուն:

Եւ ճիշդ այ՛ս է պատճառը որ Հայց. Եկեղեցին ձախողած է իր առաքելութեան մէջ եւ չէ կարողացած ազգը մօտեցնել Եկեղեցիին՝ անսահմանափակ մասնակցութեան իրաւունքներով, եւ զայն վերադարձնել ժողովուրդին, որ նոյն ինքն Եկեղեցին է: Հոգեւոր եւ վարչական թափանցիկ կառոյց ըլլալու հանգամանքին ու անբասիր եկեղեցականներու բացակայութիւնը մեզ դեմ յանդիման դրած են ազգային ահաւոր ուժացումի առաջ:

Դժբախտաբար բարոյական այս փլուզումին աղիտաւոր հետեւանքներուն բերումով է որ մեր եկեղեցականները կը զբաղին «բիզնէս»ներով: Ռ՞՞վ կրնայ յայտարարել այսօր՝ որ Հայց. Եկեղեցին պէտք չունի բարեկարգուած եկեղեցականութեան մը, որ գիտակից է իր կոչումին: Արդարամիտ եւ նուիրեալ եկեղեցականութիւն պատրաստելու կարիքը միշտ ալ շեշտուած է մեր ժողովուրդին կողմէ: Աւա՛ղ, սակայն, ծուկը գլուխէն հոտած է եւ հասած պոչին, ինչպէս հայկական առածը կ'ըսէ, եւ մենք ձեռնաձալ կը դիտենք այս բոլորը՝ սառն անտարբերութեամբ: Վերջին յիսունամեակին, դժբախտաբար, ականատես եւ ականջալուր եղանք միայն ու միայն շրթնային ծառայութեան, որ կը նմանի ծովու ալիքներու փրփուրին որ պահ մը միայն մեզ կը խանդավառէ իր գեղեցկութեամբ, ինչպէս արտասանուած շքեղ խօսքերն ու նախադասութիւնները:

Դ. «ՄԵկ ազգ, մԵկ եկեղեցի, երկը՛ւ Ամենայն Հայոց Կաթողիկոս» հարցադրումը մտքեր պղտորելու դիտաւորութիւնը ունի միայն: Կասկածէ վեր է եւ կարելի չէ հարցականի տակ դնել «**մԵկ ազգ եւ մԵկ եկեղեցի**»-ի անբաժանելի գաղափարը, իսկ ինչ կը վերաբերի Ամենայն Հայոց Կաթողիկոսի մակդիրներուն, կ'արժէ վերլուծել մտքերը հանդարտեցնելու համար, առանց բռնազբօսիկ պատճառաբանութիւններու:

Փոքրիկ պատմական մը ընենք տեսնելու համար թէ ի՞նչ տիտղոսներ գործած են Կիլիկիոյ կաթողիկոսները 1441 թուականէն ետք: Այս մէջբերումները առնուած են յիշատակարաններէ, վաւերագիրներէ, կոնդակներէ եւ տապանագիրներէ : Սահակ Ա. Քիլիսցի Մէլիսանեճեան (1674-1686). Կաթողիկոս Ամենայն Հայոց, եւ Պատրիարք Ս. Աթոռոյն Յեղեմայ եւ ուրիշ տեղ մը՝ Սահակ Կաթողիկոս Տանն Կիլիկիոյ: Գրիգոր Բ. Ատանացի Պիծակ (1686-1693). Կաթողիկոս Տանն Կիլիկիոյ: Յովհաննէս Ե. Հաճընցի (1705-1721). Կաթողիկոս Ամենայն Հայոց եւ Պատրիարք Տանն Կիլիկիոյ: Ղուկաս Աջապահեան (1733-1737). Կաթողիկոս Ամենայն Հայոց: Թեոդորոս Աջապահեան (1784-1796). Կաթողիկոս Ամենայն Հայոց որ եւ Պատրիարք Տանն Կիլիկիոյ: Միքայէլ Բ. Աջապահեան (1832-1855). Կաթողիկոս Մեծի Աթոռոյն Կիլիկիոյ, եւ ուրիշ կոնդակի մէջ ինքզինք կը կոչէ՝ Կաթողիկոս Ամենայն Հայոց եւ Ծայրագոյն Պատրիարք Մեծին Կիլիկիոյ: Սահակ Բ. Խապայեան (1902-1938). Կաթողիկոս Հայոց Կիլիկիոյ: Իսկ Սահակ Բ. Կաթողիկոսի վեհանձնութիւնը ցոյց տալու համար կը մէջբերեմ անոր նամակին վերջին տողերը՝ գրուած Խրիմեան Հայրիկ Ամենայն Հայոց Կաթողիկոսին. « *Որդիական ամենաջերմ յարգանքը՝ մնամ վասն պատուական կենաց վեհափառութեանդ* – Սահակ Կթ. Կիլիկիոյ»: Մեծ մարդ ըլլալու համար անհրաժեշտ չեն մեծ

տիտղոսներ, դժբախտաբար՝ այդ բոլորը պետք է վերագրել մարդկային տկարութեան եւ հոգեւոր արժէքներու սնանկութեան:

Փոքրիկ պատմական մը եւս ընենք զուգահեռական մը ունենալու համար եւ տեսնելու թէ ի՞նչ տիտղոսներ գործած են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կաթողիկոսները 1441 թուականէն ետք: Կիրակոս Ա. Կիրապեցի (1441-1443). Կաթողիկոս Աթոռոյ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ եւ Վաղարշապատու Սուրբ Էջմիածնիս եւ Ամենայն Հայոց: Եփրեմ Ա. Ձորագեղցի (1809-հրժ. 1830-1835). Կաթողիկոս Ամենայն Հայոց: Յովհաննէս Ը. Կարբեցի (1831-1842) Ծայրագոյն Պատրիարք Էջմիածնի-Պոլսի: Մկրտիչ Ա. Խրիմեան Վանեցի (1982-1908) Կաթողիկոս Ամենայն Հայոց: Գեորգ Ե. Սուրբէնեան (1911-1930) Ծայրագոյն Պատրիարք Կաթողիկոս Ամենայն Հայոց: Խորէն Ա. Սուրատբեզեան (1932-1938) Կաթողիկոս Ամենայն Հայոց:

Հետեւաբար՝ այս հարցը միանգամընդմիջտ լուծելու համար անհրաժեշտ էր որ Եպիսկոպոսական Ընդհանուր Ժողովին օրկարգի հարցերէն մէկը ըլլար, վերջ տալու համար հանրային փսփսուքներու, բամբասանքներու եւ մանաւանդ բռնագբօսիկ մեկնաբանութիւններու եւ բառախաղերու:

Ե. «*Խորհրդային իշխանութեան տարիներուն Ամենայն հայոց Կաթողիկոսութեան եւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան միջեւ ստեղծուած յարաբերութիւնները յանգեցան պառակտման եւ վարչական բաժանումի (Գարեգին Բ.): Ցաւալին հոն է որ նման յայտարարութիւններ կը կատարուին շահ տալու կերպով, եւ անգիտակ մեր Եկեղեցւոյ պատմութեան: Բացէք պատմութեան էջերը եւ տեսէք թէ ի՞նչ վիճակի մէջ էին մեր Նուիրապետական Աթոռները՝ Ս. Էջմիածին, Կիլիկիա, Աղթամար, Երուսաղէմ, Կ. Պոլիս, եւ անհաշիւ հակաթոռութիւններ, որոնց մէջէն ամենէն յայտնի «հերոսը» եղաւ Եղիազար Այթապցի, որ ի վերջոյ բազմեցաւ Ամենայն Հայոց Հայրապետութեան աթոռին, Յակոբ Ջուղայեցիէն ետք: Իսկ վերջին գլուխ գործոցը՝ Գեորգ Դ. Քերեստեճեան Ամենայն Հայոց Կաթողիկոսի յայտարարութիւնն էր ընդդէմ Կիլիկիոյ Աթոռին որպէս «հակաթոռ, ընդվզեալ եւ հետտեալ» անուանարկումներով:*

Հետեւաբար նորութիւններ չեն մեր Եկեղեցական կեանքէն ներս ստեղծուած անախորժ, անիմաստ մրցակցութեանց պատմութիւնները, որոնք մեր Եկեղեցին տկարացուցին պատմութեան ընթացքին: Նոյնքան եւս՝ մեր ժողովուրդին իշխող եւ չարաշահող ու կողոպտող օտար պետութիւններ կամ տիրակալներ - ըլլան անոնք Խալիֆաներ, Օսմանցիներ կամ Պարսից Շահեր - առաւել եւս մեզ կողոպտեցին, նկատի ունենալով մեր Եկեղեցական ղեկավարութեան ազահ եւ անփառունակ կեանքը:

Շահ տիրին է փնտռել մեր դժբախտութեան պատասխանատուութիւնը օտար տիրակալներու շահամոլ քաղաքականութեան մէջ: Պատմութեան առջեւ անհերքելի փաստը պիտի մնայ այն իրողութիւնը որ Հայոց. Եկեղեցւոյ ղեկավարներ, տարուած իրենց փառասիրութենէն, նոյնպէս եւ ինքնահնար եւ ինքիշխան կաթողիկոսութիւններ, ազգը պառակտեցին, բաժանեցին եւ իրենց անմիաբար եւ անմիտ ղեկավարութեամբ խորտակեցին նաեւ ժողովուրդին ազնիւ զգացումները Եկեղեցւոյ հանդէպ:

2. «*Մեր առջեւ յառնած են ներեկեղեցական չլուծուած բազում հարցեր, ինչպէս նաեւ խնդիրներ, որոնք*

հետեւանք են եկեղեցական իրաւունքի, մեր եկեղեցւոյ կանոնական սկզբունքների վրայ հիմնուած օրէնքների ու կանոնադրութիւնների բացակայութեան» (Գարեգին Բ.): Կանոնադրութիւններ միշտ ալ կային եւ կան անպայման, դժբախտաբար այդ կանոնադրութիւնը յարգողներ չկան, գինովցած եւ յղիացած իրենց կղերապետական փառասիրութեամբ, որուն արդիւնքներէն մէկն է միայն՝ հակականոնական, ոչ-քրիստոնէական եւ անտրամաբանական կարգազրկումները որոնց գլուխ գործոցը՝ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի երկար տարիներու Առաջնորդ՝ Տիրան Արք. Կիւրեղեանի կարգալուծութիւնն է, այն ալ պարզապէս՝ Մոնթրէալէն (Գանատա) մինչեւ Մոսկուա ձգուած հեռաձայնային կապով մը միայն...: Կրնա՞ք երեւակայել ողբերգութիւնը այս իրավիճակին, այս անհաւատալի իրողութեան: Ո՛չ դատ եւ դատաստան, ո՛չ հարց ու փորձ, ո՛չ մէկ ինքնապաշտպանութեան առիթ. երեսուն տարիներու վաստակ ունեցող բարձրաստիճան եկեղեցականը հեռաձայնային խօսակցութեամբ մը կարգալուծել...: “You’re Fired!” ինչպէս պիտի գոռար ԱՄՆ նախագահական թեկնածու Տոնալտ Դրամբ (Donald Trump)՝ The Apprentice խորագրով ծանօթ հեռուստատեսային ծրագրի հաղորդաշարերու աւարտին: Համայնավար բացարձակապաշտ տիրակալական ռեժիմի հոգեբանութիւնը տակաւին տիրող կը մնայ մեր երկրին մէջ, հակառակ վարչակարգի անկումին՝ քսան տարի առաջ. Սթալինը մեռաւ – կեցցէ՛ Սթալինի ուրուականը...:

Կրկնութեան գնով ըսենք. կաթողիկոսներ կը կարծեն որ իրենք են օրէնքը եւ հետեւաբար կրնան անիրաւել եւ բռնաբարել մարդկային ազնիւ զգացումները, որովհետեւ իրենք ամէն օրէնքէ վեր կը մնան: Այս մտածելակերպը մեզ առաջնորդած է քառասուն ողբալի վիճակի մը այսօր: Աշխարհի մէջ չկայ բնականոն հաստատութիւն մը որ կը գործէ առանց օրէնքի: Չկայ անձ մը որ օրէնքէ վեր կրնայ ըլլալ: Եթէ այսօր կը տառապինք օրինազանցութիւններէ, այն պատճառով է որ դադրած ենք այլեւս հաւատալէ թէ Հայ եկեղեցին տակաւին ընելիքներ ունի իր ժողովուրդի հոգեւոր եւ հասարակական կեանքին մէջ:

Է. «Կրկին անգամ վերահաստատուեցաւ մեր Ս. Աթոռին յանձնառութիւնը՝ եղբայրական ոգիով շարունակել գործակցութիւնը Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան հետ, ի խնդիր մեր եկեղեցւոյ ու ազգի ներքին միասնականութեան պահպանման» (Արամ Ա.): Հաւատա՞նք կատարուած շրթնային ծառայութեան, որ ոչ մէկ ձեւով կը համապատասխանէ իրականութեան: Ի՞նչ գործակցութեան մասին կը խօսի Արամ Կաթողիկոս, բացի միացեալ պաշտօնական յայտարարութիւններէ: Քաջութիւն եւ վեհանձնութիւն պէտք է ունենալ բոլոր տարակարծութիւնները կլոր սեղանի վրայ դնելու եւ քրիստոնէավայել ոգիով ու կեցուածքով արդար լուծումներ որոնելու : Երկու կաթողիկոսութիւններու յարաբերութիւնները այնքան կնճռոտ եւ բազմազան են, որ եթէ հարկ ըլլայ, կարելի է հատորներ գրել այս նիւթի մասին: Մեր երկու նուիրապետական Աթոռներն ալ գործիքներ են զիրենք ղեկավարող ոյժերուն ձեռքը: Եկեղեցականութեան կը պակսի կամքն ու կորովը, նուիրումն ու տեսիլքը, ստեղծելու այդ աստուածահաճոյ եղբայրական մթնոլորտը երկու կաթողիկոսութեանց միջեւ, վիճակ մը՝ որուն կը սպասէ, կ'ակնկալէ եւ կ'երագէ երկար տարիներէ ի վեր մեր ազնիւ ժողովուրդը:

Նոյնքան անհասկնալի, առ նուազն տխուր, է այն իրողութիւնը որ մեր երկու պատրիարքական Աթոռներն ալ ո՛չ միայն կը փորձեն հեռու մնալ Մայր Աթոռէն, այլեւ սառն են անոնց

յարաբերութիւնները Էջմիածնի հետ: Նոյնպէս նաեւ սփիւռքեան թեմեր կարելի եղածին չափ կը փորձեն հեռու մնալ Մայր Աթոռի ոտնձգութիւններէն, որուն արձագանքը կը լսենք Ֆրանսայէն մինչեւ Անգլիա, Չուիցերիա, Պոլկարիա, Գանատա եւ այլուր: Մամուլի մէջ յաճախ կը կարդանք որ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ. Ներսիսեան կ'ուզէ բոլոր թեմերու վրայ տեսնել իրեն հլու-հնազանդ ծառայող եկեղեցականներ, որոնք, թէկուզ անգիտակ սփիւռքեան կառոյցներուն եւ Արեւմտահայերէնի, պատրաստակամութիւնը ունին յաջողցնելու իր ծրագիրները, այլ խօսքով՝ ղեկավարելու սփիւռքեան թեմերու հիւրանական միջոցները: Այս մասին ընդարձակօրէն անդրադարձած ենք անցեալին եւ հարկ չենք տեսներ կրկնել, իսկ փափաքողներ աւելին կրնան կարդալ <http://www.vanagan.com> կայքէջին վրայ:

Անհրաժեշտ է վերատեսութեան ենթարկել Եկեղեցւոյ պաշտօնեութեան եւ ժողովուրդի փոխ-յարաբերութիւնները: Այլ խօսքով՝ ստեղծել բառին ամբողջական իմաստով վերածնունդ մը՝ որուն ժողովուրդը պիտի մասնակցի իր անսահմանափակ իրաւունքով եւ իր բաժինը պիտի բերէ Եկեղեցւոյ վերաշխուժաւորման աշխատանքին մէջ: Առանց ժողովուրդի ամբողջական մասնակցութեան, դատապարտուած պիտի մնանք նախ՝ մենաշնորհեալ կղերապետութենէ տառապող եկեղեցականներուն ձեռքը, ու ապա պիտի յանձնուինք քաղաքական եւ ընկերային մաշումներու յորձանուտին:

Մասնաւորաբար մեր սփիւռքեան պայմաններուն մէջ, Եկեղեցին ունի մեծագոյն ոյժը համախմբելու հայութիւնը իր շուրջ: Չկայ ուրիշ հաստատութիւն մը որ կրնայ այդ դերը կատարել, նամանաւանդ չեզոքացնելով մեր քաղաքական, ընկերային եւ հասարակական կեանքի բոլոր տարակարծութիւնները: Հետեւաբար՝ բոլոր ժամանակներէ աւելի, ԱՅՍՕՐ անհրաժեշտ է ստեղծել եւ ապահովել ամբողջական մասնակցութիւնը մեր ժողովուրդին՝ Եկեղեցւոյ կեանքէն ներս եւ վանել ու հեռացնել բոլոր անոնք, որոնք, իրենց ջոջ-ամիրայական ախորժակներով եւ իրենց քսակները պարարտացնելու սնանկ հոգեբանութեամբ, կը յաւակնին ըլլալ Եկեղեցւոյ եւ ազգին տերը:

Անկասկած որ մեր առաջարկած կրօնամշակութային վերածնունդ-յեղափոխութեան առջեւ ցցուող արգելքները բազմաթիւ պիտի ըլլան, նամանաւանդ անոնց կողմէ որոնք կը յաւակնին մենատերերը ըլլալ Եկեղեցւոյ կազմակերպութեան: Այս կացութեան լրջութիւնը ըմբռնելու եւ անոր հակազդելու համար, անհրաժեշտ է հաւատալ Եկեղեցւոյ կրօնա-ազգային էական դերին եւ պատրաստ ըլլալ գործօն մասնակցութեամբ յեղաշրջելու այս ապականած մթնոլորտը, որ մեզ առաջնորդած է ազգային հիւանդագին անտարբերութեան:

Անգամ մը եւս կ'ուզենք շեշտել որ մեր վերջին երկու Եպիսկոպոսական ժողովներն ալ իրենց օրակարգին վրայ չունեցան Եկեղեցւոյ միութեան հարցը, որուն գլխաւոր խոչնդոտներէն մէկը կը կարծուի թեմերու բաժանումը, մինչդեռ՝ թեմական հարցերը խոր արմատներ ունին մեր պատմութեան մէջ, նամանաւանդ Օսմանեան եւ Պարսկական տիրապետութեանց տակ: Եթէ իսկապէս կը հաւատանք միութեան գաղափարին այդ պարագային պարտաւոր էինք որոնել ճամբաներ վերջ տալու համար մեր բոլոր տարակարծութիւններուն: Ահաւասիկ առաջադրութիւններ, որոնց մասին լրջօրէն մտածելու ենք ազգովին.-

- 1.- Հայրապետական տիտղոսներու յստակեցում եւ մրցակցութեան դադարեցում - որուն վերջին «փայլուն» օրինակը տեսանք Վատիկանի մէջ, ուր մեր կաթողիկոսները իրենց «իշխանական-աւատապետական» բեհեզեայ զգեստներով եւ արծիւներով փոքր երեւցան պարզ եւ համեստ հագուած եւ միայն խաչ մը շալկած Կաթողիկէ համայնքի քահանայապետին մօտ: Ամէն ինչ փոխյարգանքի եւ սիրոյ վրայ պետք է հիմնուած ըլլայ:
 - 2.- Թեմերու վերատեսութիւն, վերարժեւորում եւ բաժանում միշտ գաղութներու իրաւունքներն ու պահանջները նկատի ունենալով:
 - 3.- Պատրիարքական Աթոռներու ինքնավարման ամբողջական ճանաչում: Պատրիարքական Աթոռներու միաբանութեանց կողմէ ընտրուած եպիսկոպոսանալու արժանի թեկնածուներ կրնան նաեւ ձեռնադրուիլ Կիլիկիոյ կաթողիկոսներուն կողմէ: Ասիկա ո՛չ մէկ ձեւով կը նսեմացնէ Էջմիածնի՝ նախամեծար Աթոռ ըլլալու հանգամանքը:
 - 4.- Սփիւռքի բոլոր թեմերուն մէջ, հոգեւոր ծառայութեան թեկնածուներ ապահովել բոլոր Նուիրապետական Աթոռներէն, առանց խտրութեան, նկատի ունենալով միայն տուեալ հոգեւորականին արժանիքներն ու պատրաստութիւնը: Չմոռնանք յիշեցնելու որ, Խորհրդային իշխանութեան տարիներուն, Էջմիածնի սփիւռքեան թեմերու մէջ առաջնորդական կամ հովուական պաշտօններ վարեցին՝ Երուսաղեմի, ինչպէս նաեւ եւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «նախկին» միաբաններ:
 - 5.- Առաջնորդական թեկնածուներու ընտրութիւնը ձգուի գաղութին, եւ չպարտադրել թեկնածուներ, որոնք չունին պատրաստութիւնը ստանձնելու նման կարեւոր պաշտօններ: Մերժումի պարագային, կաթողիկոսը պարտաւոր է տրամաբանական բացատրութիւն տալ:
 - 6.- Ազատ թողուլ միաբաններ, որոնք կը փափաքին ծառայել այլ Նուիրապետական Աթոռներու, առանց խախտելու կարգ ու կանոնը, եթէ կը հաւատանք որ եկեղեցին մէկ է:
 - 7.- Ազատ կամքի ըմբռնողութենէն մեկնելով, չկարգալուծել միաբաններ որոնք կ'երթան եւ կը միանան Կաթողիկէ եկեղեցւոյ, եւ նոյն ձեւով լայնատարած ձեռքերով ընդունիլ բոլոր անոնք որոնք կը փափաքին Հայց. եկեղեցւոյ միանալ: Քրիստոսի եկեղեցին մէկ է:
 - 8.- Կրօնական դատաստանական խորհուրդ մը ստեղծել, որ պիտի զբաղի եկեղեցականներու հարցերով եւ չթողուլ որ կաթողիկոսներ առանձինս վճիռ արձակեն եւ պարտադրեն իրենց կամքը, այլ միայն վաւերացնեն դատական մարմնի որոշումը:
- Հոս կ'արժէ փոքրիկ շեղում մը կատարել եւ յիշեցնել որ կաթողիկոսը թէեւ եպիսկոպոսապետ է, սակայն երբեք պետք չէ կարծէ, ըստ աւետարանական սկզբունքներուն, որ իր բացարձակ իշխանութեան տակ պիտի ունենայ բոլոր եպիսկոպոսները: Գիտենք որ Պօղոս Առաքեալ զանազանութիւն չի դներ նոյն իսկ եպիսկոպոսներու եւ երեցներու միջեւ: Ժամանակի թաւալումով անհրաժեշտութիւն ստեղծուեցաւ «վերատեսուչ» մը (յունարէն՝ episkopos – հայ.՝ եպիսկոպոս) կարգելու առաքելական գործերու բարուք ընթացքին համար: Միայն երկրորդ դարուն էր որ եպիսկոպոսներ կարեւորութիւն ստացան որպէս նուիրապետական բարձրագոյն կարգ,

սարկաւագութեան եւ քահանայութեան աստճաններէն ետք: Եւ սակայն սուրբգրային ճշմարտութիւնը կը մնայ անփոփոխ – եպիսկոպոսութենէ վեր կարգ կամ աստիճան չկայ եկեղեցւոյ մէջ, թէեւ եպիսկոպոսի մը կրնայ տրուիլ ակելի լայն **վարչական** պատասխանատուութիւն, զոր ներկայիս կը տեսնենք կաթողիկոսական պաշտօնին մէջ, որ Էապէս վարչական բնոյթ կրող պաշտօն մըն է: Հետեւաբար կրնանք ըսել որ կաթողիկոսը կամ եպիսկոպոսապետը պարզապէս առաջինն է հաւասարներու մէջ:

Դարձեալ, կ'արժէ յիշեցնել որ կաթողիկոսութեան թեկնածուն՝ պայման չէ որ անպայման եպիսկոպոս ըլլայ: Պատմութենէն գիտենք որ Գրիգոր Լուսաւորիչ՝ եպիսկոպոս չէր երբ ընտրուեցաւ կաթողիկոս եւ ո'չ ալ Ներսէս Պարթեւ, որ պալատական աշխարհական մըն էր երբ կոչուեցաւ կաթողիկոսութեան: Հետեւաբար կարելի է ընտրել անձ մը որ խոր գիտութիւն ունի մեր եկեղեցւոյ վարդապետութեան եւ աստուածաբանութեան, օժտուած վարչական ձիրքերով, սիրուած իր ժողովուրդէն, եւ անշուշտ պիտի ուզէի քայլ մը առաջ երթալ եւ ըսել՝ Նոյնիսկ ամուսնացեալ քահանան, որ կը լրացնէ վերեւ յիշատակուած արժանիքները, եպիսկոպոս ձեռնադրուելէ ետք, կարող է կաթողիկոս ընտրուիլ. «*իրականութիւնն է թէ այլեւս հասած է ամուսնաւոր հոգեւորականներուն առջեւ եկեղեցական յառաջացումի եւ վարչական ընդլայնման ժամը: Չայդ կը պահանջէ ոչ՝ միայն դարուն ոգին, այլ մանաւանդ ներքնապէս եկեղեցական ուժաւորման հարկը, ու ատոր չեն հակառակիր ոչ կրօնքին հոգին, եւ ոչ մեր եկեղեցւոյ նախկին եւ նոյնիսկ ներկայ իրաւաբանութիւնը*» (Թորգոմ Պատրիարք Գուշակեան):

Ահաւասիկ անլոյծ մնացած մարտահրաւերներ մեր ժողովուրդին առջեւ ծառայող: Պիտի կրնա՞նք քաջութիւնը ունենալ հաւաքուելու կլոր սեղանի շուրջ եւ լուծելու մեր տարակարծութիւնները, որոնք մինչեւ այսօր մեզ բաժանեալ պահեցին: Յանուն մեր նահատակներուն՝ պարտաւոր ենք, ապա թէ ոչ պատմութիւնը ածխամատիտով պիտի գրէ մեր մասին: Այ՛ո, ՄԵԿ ԱԶԳ, ՄԵԿ ԵԿԵՂԵՑԻ այսօր եւ յաւիտեան

Սոյն յօդուածի սկիզբը ընթերցելու համար խփեցէք [Եկեղեցւոյ Միութիւն](#).- Խմբ.

Ռական Մխիթարեան, Լոս Անճելըս, 9 Օգոստոս 2015

Վերադառնանք եկեղեցական կեանքի ա՛յլ ցաւերուն:

3. Թեմական հարցերու դժուարութիւններն ու կարգադրութիւնները, նամանաւանդ բաժանումները՝ միայն եկեղեցական խնդիրներ չեն, ընդհակառակը՝ ակելի քաղաքական, որոնց արմատները շա՛տ խոր են մեր պատմութեան մէջ: Սահմանադրական կանոնադրութիւնները պետք է յարգուին իւրանքանչիւր Թեմէ ներս: Թեմական մարմիններ, որոնք ընտրուած են իրենց ժողովուրդին կողմէ, պարտին որոշել այդ Թեմէն ներս կատարուելիք կրօնական-հասարակական աշխատանքները ըստ տուեալ կանոնադրութեան, եւ **Կաթողիկոս ու Առաջնորդ պարտին յարգել այդ Թեմի կանոնադրութեան տրամադրութիւնները**, առանց մերժելու ժողովրդավարական կարգն ու կանոնը եւ երբեք չփորձեն պարտադրել իրենց կամքը:

Թեմերը աւատապետական կալուածներ չեն եւ չեն ալ կրնար ըլլալ: Հայց. Եկեղեցւոյ ազգային-

Ներկայացուցչական նկարագիրը պարտաւոր ենք մշակել, զարգացնել եւ արժեւորել, առանց անոր տալու կղերապետական-մենատիրական հանգամանք, թէկուզ նման ախորժակներ ունեցող ղեկավարներ շատ են այս օրերուն:

Պարտք կը զգամ այստեղ անգամ մը եւս յիշեցնելու որ եկեղեցական-ընկերային-մշակութային կեանքէն ներս ստեղծուած ամիրայական տիրապետութեան կացութիւնը պատճառ դարձած է որ ժողովուրդի ճնշող մեծամասնութիւնը հեռանայ եկեղեցւոյ կառոյցէն եւ չհետաքրքրուի անոր դարերու ընթացքին ունեցած օգտաշատ առաքելութեամբ: Ինչպէս անցեալին՝ այսօր ալ շատ մեծ են մեր ժողովուրդին ակնկալութիւնները եկեղեցւոյ ղեկավարութենէն:

Ցաւալին հոն է՝ որ Հայ ժողովուրդը դեռ քաջութիւն չունի իր իրաւունքին տեր կանգնելու եւ պահանջելու այն ինչ որ իրեն կը պատկանի օրինական սահմաններու մէջ, իր արդար քրտինքով շահուած եւ օրինակացուած սահմանադրութեամբ: Ժամանակն է որ իր վրայէն թօթափէ ապականած եւ մենաշնորհեալ կարծեցեալ ա՛յն փոքրաթիւ «չոչերը» որոնք եկեղեցին վերածած են շուկայի եւ անհատական կամ այլ տեսակ շահեր հետապնդելու լաւագոյն դաշտի մը:

Տխուր է պատկերը ամենուրեք, որովհետեւ մեր գաղութները կը ղեկավարուին փոքրաթիւ, իրենք զիրենք մենաշնորհեալ կարծող անհատներով, որոնք ընդհանրապէս կը նշանակուին այդ պաշտօնին՝ կա՛մ զիրենք հովանաւորող կազմակերպութենէն եւ կամ կաթողիկոսէն: **Մեր բոլոր գաղութներու ընտրութիւնները ընդհանրապէս հակաօրինական են**, եւ կը կատարուին առանց ժողովուրդի ստուար մասնակցութեան: Հետեւաբար ժողովուրդը կը գրկուի իր կամքը արտայայտելու հնարաւորութենէն, որուն որպէս արդիւնք՝ կը հեռանայ ան իր Մայր եկեղեցիէն:

Մեր եկեղեցին, ինչպէս նաեւ անոր առընթերակից բոլոր բարեսիրական եւ կրթական հաստատութիւնները, պարտին դուրս գալ փակ հիմնարկ մը ըլլալու հոգեբանութենէն եւ ըլլան թափանցիկ հաստատութիւններ, կառչած ըլլալով օրէնքի իւրանքանչիւր տառին եւ տրամադրութեան: Ժողովուրդը որ ինքնին եկեղեցին է, պէտք է յստակ կերպով հասկնայ, թէ իր անտարբերութեամբ՝ միայն կը նպաստէ բոլոր անոնց, որոնք իրարու մէջ կը բաժնեն «ընկավարութեան» պաշտօնները, եւ որոնք երբեք չեն նպաստեր ազգային ոգիի ծաղկումին եւ կարգ մը թեմեր կը պահեն պառակտեալ երկու առաջնորդարաններով ի նպաստ իրենց կազմակերպութեան եւ երբեմն ալ անհատական շահերուն:

Եւ ճիշդ այ՛ս է պատճառը որ Հայց. եկեղեցին ձախողած է իր առաքելութեան մէջ եւ չէ կարողացած ազգը մօտեցնել եկեղեցիին՝ անսահմանափակ մասնակցութեան իրաւունքներով, եւ զայն վերադարձնել ժողովուրդին, որ նոյն ինքն եկեղեցին է: Հոգեւոր եւ վարչական թափանցիկ կառոյց ըլլալու հանգամանքին ու անբասիր եկեղեցականներու բացակայութիւնը մեզ դեմ յանդիման դրած են ազգային ահաւոր ուժացումի առաջ:

Դժբախտաբար բարոյական այս փլուզումին աղիտաւոր հետեւանքներուն բերումով է որ մեր եկեղեցականները կը զբաղին «բիզնէս»ներով: Ո՞վ կրնայ յայտարարել այսօր՝ որ Հայց. եկեղեցին պէտք չունի բարեկարգուած եկեղեցականութեան մը, որ գիտակից է իր կոչումին: Արդարամիտ եւ նուիրեալ եկեղեցականութիւն պատրաստելու կարիքը միշտ ալ շեշտուած է մեր ժողովուրդին կողմէ:

Աւաճող, սակայն, ծուկը գլուխէն հոտած է եւ հասած պոչին, ինչպէս հայկական առածը կ'ըսէ, եւ մենք ձեռնածալ կը դիտենք այս բոլորը՝ սառն անտարբերութեամբ: Վերջին յիսունամեակին, դժբախտաբար, ականատես եւ ականջալուր եղանք միայն ու միայն շրթնային ծառայութեան, որ կը նմանի ծովու ալիքներու փրփուրին որ պահ մը միայն մեզ կը խանդավառէ իր գեղեցկութեամբ, ինչպէս արտասանուած շքեղ խօսքերն ու նախադասութիւնները:

Դ. «ՄԵԿ ազգ, մԵԿ եկեղեցի, երկր՞Լ Ամենայն Հայոց Կաթողիկոս» հարցադրումը մտքեր պղտորելու դիտաւորութիւնը ունի միայն: Կասկածէ վեր է եւ կարելի չէ հարցականի տակ դնել «**մԵԿ ազգ եւ մԵԿ եկեղեցի**»-ի անբաժանելի գաղափարը, իսկ ինչ կը վերաբերի Ամենայն Հայոց Կաթողիկոսի մակդիրներուն, կ'արժէ վերլուծել մտքերը հանդարտեցնելու համար, առանց բռնագբօսիկ պատճառաբանութիւններու:

Փոքրիկ պատմական մը ընենք տեսնելու համար թէ ի՞նչ տիտղոսներ գործած են Կիլիկիոյ կաթողիկոսները 1441 թուականէն ետք: Այս մեջբերումները առնուած են յիշատակարաններէ, վաւերագիրներէ, կոնդակներէ եւ տապանագիրներէ : Սահակ Ա. Քիլիսցի Մէլիանէճեան (1674-1686). Կաթողիկոս Ամենայն Հայոց, եւ Պատրիարք Ս. Աթոռոյն Յեղեմայ եւ ուրիշ տեղ մը՝ Սահակ Կաթողիկոս Տանն Կիլիկիոյ: Գրիգոր Բ. Ատանացի Պիծակ (1686-1693). Կաթողիկոս Տանն Կիլիկիոյ: Յովհաննէս Ե. Հաճընցի (1705-1721). Կաթողիկոս Ամենայն Հայոց եւ Պատրիարք Տանն Կիլիկիոյ: Ղուկաս Աջապահեան (1733-1737). Կաթողիկոս Ամենայն Հայոց: Թեոդորոս Աջապահեան (1784-1796). Կաթողիկոս Ամենայն Հայոց որ եւ Պատրիարք Տանն Կիլիկիոյ: Միքայէլ Բ. Աջապահեան (1832-1855). Կաթողիկոս Մեծի Աթոռոյն Կիլիկիոյ, եւ ուրիշ կոնդակի մեջ ինքզինք կը կոչէ՝ Կաթողիկոս Ամենայն Հայոց եւ Ծայրագոյն Պատրիարք Մեծին Կիլիկիոյ: Սահակ Բ. Խապայեան (1902-1938). Կաթողիկոս Հայոց Կիլիկիոյ: Իսկ Սահակ Բ. Կաթողիկոսի վեհանձնութիւնը ցոյց տալու համար կը մեջբերեմ անոր նամակին վերջին տողերը՝ գրուած Խրիմեան Հայրիկ Ամենայն Հայոց Կաթողիկոսին. « *Որդիական ամենաջերմ յարգանքով մնամ վասն պատուական կենաց վեհափառութեանդ* – Սահակ Կթղ. Կիլիկիոյ»: Մեծ մարդ ըլլալու համար անհրաժեշտ չեն մեծ տիտղոսներ, դժբախտաբար՝ այդ բոլորը պէտք է վերագրել մարդկային տկարութեան եւ հոգեւոր արժեքներու սնանկութեան:

Փոքրիկ պատմական մը եւս ընենք զուգահեռական մը ունենալու համար եւ տեսնելու թէ ի՞նչ տիտղոսներ գործած են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կաթողիկոսները 1441 թուականէն ետք: Կիրակոս Ա. Վիրապեցի (1441-1443). Կաթողիկոս Աթոռոյ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ եւ Վաղարշապատու Սուրբ Էջմիածնիս եւ Ամենայն Հայոց: Եփրեմ Ա. Ձորագեղցի (1809-հրժ. 1830-1835). Կաթողիկոս Ամենայն Հայոց: Յովհաննէս Ը. Կարբեցի (1831-1842) Ծայրագոյն Պատրիարք Էջմիածնի-Պոլս: Մկրտիչ Ա. Խրիմեան Վանեցի (1882-1908) Կաթողիկոս Ամենայն Հայոց: Գեորգ Ե. Սուրենեան (1911-1930) Ծայրագոյն Պատրիարք Կաթողիկոս Ամենայն Հայոց: Խորէն Ա. Սուրատբեգեան (1932-1938) Կաթողիկոս Ամենայն Հայոց:

Հետեւաբար՝ այս հարցը միանգամընդմիջտ լուծելու համար անհրաժեշտ էր որ Եպիսկոպոսական Ընդհանուր Ժողովին օրկարգի հարցերէն մեկը ըլլար, վերջ տալու համար հանրային փսփոսքներու, բամբասանքներու եւ մանաւանդ բռնագբօսիկ մեկնաբանութիւններու եւ բառախաղերու:

Ե. «*Խորհրդային իշխանութեան տարիներուն Ամենայն հայոց Կաթողիկոսութեան եւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան միջեւ ստեղծուած յարաբերութիւնները յանգեցան պառակտման եւ վարչական բաժանումի (Գարեգին Բ.): Յաւելին հոն է որ նման յայտարարութիւններ կը կատարուին շահաւոր կերպով, եւ անգիտակ մեր Եկեղեցւոյ պատմութեան: Բացէք պատմութեան էջերը եւ տեսէք թէ ի՞նչ վիճակի մէջ էին մեր Նուիրապետական Աթոռները՝ Ս. Էջմիածին, Կիլիկիա, Աղթամար, Երուսաղէմ, Կ. Պոլիս, եւ անհաշիւ հակաթոռութիւններ, որոնց մէջէն ամենէն յայտնի «հերոսը» եղաւ Եղիազար Այթապցին, որ ի վերջոյ բազմեցաւ Ամենայն Հայոց Հայրապետութեան աթոռին, Յակոբ Ջուղայեցիէն ետք: Իսկ վերջին գլուխ գործոցը՝ Գեորգ Դ. Քերեստեճեան Ամենայն Հայոց Կաթողիկոսի յայտարարութիւնն էր ընդդէմ Կիլիկիոյ Աթոռին որպէս «հակաթոռ, ընդվզեալ եւ հետտեալ» անուանարկումներով:*

Հետեւաբար նորութիւններ չեն մեր Եկեղեցական կեանքէն ներս ստեղծուած անախորժ, անիմաստ մրցակցութեանց պատմութիւնները, որոնք մեր Եկեղեցին տկարացուցին պատմութեան ընթացքին: Նոյնքան եւս՝ մեր ժողովուրդին իշխող եւ չարաշահող ու կողոպտող օտար պետութիւններ կամ տիրակալներ – ըլլան անոնք խալիֆաներ, Օսմանցիներ կամ Պարսից Շահեր – առաւել եւս մեզ կողոպտեցին, նկատի ունենալով մեր Եկեղեցական ղեկավարութեան ազահ եւ անփառունակ կեանքը:

Շահաւոր դիրքին է փնտռել մեր դժբախտութեան պատասխանատուութիւնը օտար տիրակալներու շահամուլ քաղաքականութեան մէջ: Պատմութեան առջեւ անհերքելի փաստը պիտի մնայ ա՛յն իրողութիւնը որ Հայոց. Եկեղեցւոյ ղեկավարներ, տարուած իրենց փառասիրութենէն, նոյնպէս եւ ինքնահնար եւ ինքիշխան կաթողիկոսութիւններ, ազգը պառակտեցին, բաժանեցին եւ իրենց անմխիթար եւ անմիտ ղեկավարութեամբ խորտակեցին նաեւ ժողովուրդին ազնիւ զգացումները Եկեղեցւոյ հանդէպ:

Զ. «*Մեր առջեւ յառնած են ներեկեղեցական չլուծուած բազում հարցեր, ինչպէս նաեւ խնդիրներ, որոնք հետեւանք են Եկեղեցական իրաւունքի, մեր Եկեղեցւոյ կանոնական սկզբունքների վրայ հիմնուած օրէնքների ու կանոնադրութիւնների բացակայութեան» (Գարեգին Բ.):* Կանոնադրութիւններ միշտ ալ կային եւ կան անպայման, դժբախտաբար այդ կանոնադրութիւնը յարգողներ չկան, գինովցած եւ յղփացած իրենց կղերապետական փառասիրութեամբ, որուն արդիւնքներէն մէկն է միայն՝ հակականոնական, ոչ-քրիստոնէական եւ անտրամաբանական կարգազրկումները որոնց գլուխ գործոցը՝ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի երկար տարիներու Առաջնորդ՝ Տիրան Արք. Կիւրեղեանի կարգալուծութիւնն է, այն ալ պարզապէս՝ Մոնթրէալէն (Գանատա) մինչեւ Մոսկուա ձգուած հեռաձայնային կապով մը միայն...: Կրնա՞ք երեւակայել ողբերգութիւնը այս իրավիճակին, այս անհաւատալի իրողութեան: Ո՛չ դատ եւ դատաստան, ո՛չ հարց ու փորձ, ո՛չ մէկ ինքնապաշտպանութեան առիթ. երեսուն տարիներու վաստակ ունեցող բարձրաստիճան Եկեղեցականը հեռաձայնային խօսակցութեամբ մը կարգալուծել...: “You’re Fired!” ինչպէս պիտի գոռար ԱՄՆ նախագահական թեկնածու Տոնալտ Դրամբ (Donald Trump)՝ The Apprentice խորագրով ծանօթ հեռուստատեսային ծրագրի հաղորդաչարերու աւարտին: Համայնավար բացարձակապաշտ տիրակալական ռեժիմի հոգեբանութիւնը տակաւին տիրող կը մնայ մեր երկրին մէջ, հակառակ

վարչակարգի անկումին՝ քսան տարի առաջ. Սթալինը մեռաւ – կեցցե՛ Սթալինի ուրուականը...:

Կրկնութեան գնով ըսենք. կաթողիկոսներ կը կարծեն որ իրենք են օրէնքը եւ հետեւաբար կրնան անիրաւել եւ բռնաբարել մարդկային ազնիւ զգացումները, որովհետեւ իրենք ամէն օրէնքէ վեր կը մնան: Այս մտածելակերպը մեզ առաջնորդած է քառասային ողբալի վիճակի մը այսօր: Աշխարհի մէջ չկայ բնականոն հաստատութիւն մը որ կը գործէ առանց օրէնքի: Չկայ անձ մը որ օրէնքէ վեր կրնայ ըլլալ: Եթէ այսօր կը տառապինք օրինազանցութիւններէ, այն պատճառով է որ դադարած ենք այլեւս հաւատալէ թէ Հայ Եկեղեցին տակաւին ընելիքներ ունի իր ժողովուրդի հոգեւոր եւ հասարակական կեանքին մէջ:

Է. «Կրկին անգամ վերահաստատուեցաւ մեր Ս. Աթոռին յանձնառութիւնը՝ եղբայրական ոգիով շարունակել գործակցութիւնը Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան հետ, ի խնդիր մեր եկեղեցւոյ ու ազգի ներքին միասնականութեան պահպանման» (Արամ Ա.): Հաւատա՞նք կատարուած շրթնային ծառայութեան, որ ոչ մէկ ձեւով կը համապատասխանէ իրականութեան: Ի՞նչ գործակցութեան մասին կը խօսի Արամ Կաթողիկոս, բացի միացեալ պաշտօնական յայտարարութիւններէ: Քաջութիւն եւ վեհանձնութիւն պետք է ունենալ բոլոր տարակարծութիւնները կլոր սեղանի վրայ դնելու եւ քրիստոնէավայել ոգիով ու կեցուածքով արդար լուծումներ որոնելու : Երկու կաթողիկոսութիւններու յարաբերութիւնները այնքան կնճռոտ եւ բազմազան են, որ եթէ հարկ ըլլայ, կարելի է հատորներ գրել այս նիւթի մասին: Մեր երկու նուիրապետական Աթոռներն ալ գործիքներ են զիրենք ղեկավարող ոյժերուն ձեռքը: Եկեղեցականութեան կը պակսի կամքն ու կորովը, նուիրումն ու տեսիլքը, ստեղծելու այդ աստուածահաճոյ եղբայրական մթնոլորտը երկու կաթողիկոսութեանց միջեւ, վիճակ մը՝ որուն կը սպասէ, կ'ակնկալէ եւ կ'երագէ երկար տարիներէ ի վեր մեր ազնիւ ժողովուրդը:

Նոյնքան անհասկնալի, առ նուազն տխուր, է այն իրողութիւնը որ մեր երկու պատրիարքական Աթոռներն ալ ո'չ միայն կը փորձեն հեռու մնալ Մայր Աթոռէն, այլեւ սառն են անոնց յարաբերութիւնները Էջմիածնի հետ: Նոյնպէս նաեւ սփիւռքեան թեմեր կարելի եղածին չափ կը փորձեն հեռու մնալ Մայր Աթոռի ոտնձգութիւններէն, որուն արծագանքը կը լսենք Ֆրանսայէն մինչեւ Անգլիա, Չուիցերիա, Պուլկարիա, Գանատա եւ այլուր: Մամուլի մէջ յաճախ կը կարդանք որ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ. Ներսիսեան կ'ուզէ բոլոր թեմերու վրայ տեսնել իրեն հլու-հնազանդ ծառայող եկեղեցականներ, որոնք, թեկուզ անգիտակ սփիւռքեան կառոյցներուն եւ Արեւմտահայերէնի, պատրաստակամութիւնը ունին յաջողցնելու իր ծրագիրները, այլ խօսքով՝ ղեկավարելու սփիւռքեան թեմերու նիւթական միջոցները: Այս մասին ընդարձակօրէն անդրադարձած ենք անցեալին եւ հարկ չենք տեսներ կրկնել, իսկ փափաքողներ աւելին կրնան կարդալ <http://www.vanagan.com> կայքէջին վրայ:

Անիրաժեշտ է վերատեսութեան ենթարկել Եկեղեցւոյ պաշտօնութեան եւ ժողովուրդի փոխ-յարաբերութիւնները: Այլ խօսքով՝ ստեղծել բառին ամբողջական իմաստով վերածնունդ մը՝ որուն ժողովուրդը պիտի մասնակցի իր անսահմանափակ իրաւունքով եւ իր բաժինը պիտի բերէ Եկեղեցւոյ վերաշխուժաւորման աշխատանքին մէջ: Առանց ժողովուրդի ամբողջական մասնակցութեան, դատապարտուած պիտի մնանք նախ՝ մենաշնորհեալ կղերապետութենէ

տառապող եկեղեցականներուն ձեռքը, ու ապա պիտի յանձնուինք քաղաքական եւ ընկերային մաշումներու յորձանուտին:

Մասնաւորաբար մեր սփիւռքեան պայմաններուն մէջ, Եկեղեցին ունի մեծագոյն ոյժը համախմբելու հայութիւնը իր շուրջ: Չկայ ուրիշ հաստատութիւն մը որ կրնայ այդ դերը կատարել, նամանաւանդ չէզոքացնելով մեր քաղաքական, ընկերային եւ հասարակական կեանքի բոլոր տարակարծութիւնները: Հետեւաբար՝ բոլոր ժամանակներէ աւելի, ԱՅՍՕՐ անհրաժեշտ է ստեղծել եւ ապահովել ամբողջական մասնակցութիւնը մեր ժողովուրդին՝ Եկեղեցւոյ կեանքէն ներս եւ վանել ու հեռացնել բոլոր անոնք, որոնք, իրենց ջոջ-ամիրայական ախորժակներով եւ իրենց քսակները պարարտացնելու սնանկ հոգեբանութեամբ, կը յաւակնին ըլլալ Եկեղեցւոյ եւ ազգին տերը:

Անկասկած որ մեր առաջարկած կրօնամշակութային վերածնունդ-յեղափոխութեան առջեւ ցցուող արգելքները բազմաթիւ պիտի ըլլան, նամանաւանդ անոնց կողմէ որոնք կը յաւակնին մենատէրերը ըլլալ Եկեղեցւոյ կազմակերպութեան: Այս կացութեան լրջութիւնը ըմբռնելու եւ անոր հակազդելու համար, անհրաժեշտ է հաւատալ Եկեղեցւոյ կրօնա-ազգային էական դերին եւ պատրաստ ըլլալ գործօն մասնակցութեամբ յեղաշրջելու այս ապականած մթնոլորտը, որ մեզ առաջնորդած է ազգային հիւանդագին անտարբերութեան:

Անգամ մը եւս կ'ուզենք շեշտել որ մեր վերջին երկու Եպիսկոպոսական ժողովներն ալ իրենց օրակարգին վրայ չունեցան Եկեղեցւոյ միութեան հարցը, որուն գլխաւոր խոչնդոտներէն մէկը կը կարծուի թեմերու բաժանումը, մինչդեռ՝ թեմական հարցերը խոր արմատներ ունին մեր պատմութեան մէջ, նամանաւանդ Օսմանեան եւ Պարսկական տիրապետութեանց տակ: Եթէ իսկապէս կը հաւատանք միութեան գաղափարին այդ պարագային պարտաւոր էինք որոնել ճամբաներ վերջ տալու համար մեր բոլոր տարակարծութիւններուն: Ահաւասիկ առաջադրութիւններ, որոնց մասին լրջօրէն մտածելու ենք ազգովին.-

- 1.- Հայրապետական տիտղոսներու յստակեցում եւ մրցակցութեան դադարեցում - որուն վերջին «փայլուն» օրինակը տեսանք Վատիկանի մէջ, ուր մեր կաթողիկոսները իրենց «իշխանական-աւատապետական» բեհեզեայ զգեստներով եւ արծիւներով փոքր երեւցան պարզ եւ համեստ հագուած եւ միայն խաչ մը շալկած Կաթողիկէ համայնքի քահանայապետին մօտ: Ամէն ինչ փոխյարգանքի եւ սիրոյ վրայ պէտք է հիմնուած ըլլայ:
- 2.- Թեմերու վերատեսութիւն, վերարժեւորում եւ բաժանում միշտ գաղութներու իրաւունքներն ու պահանջները նկատի ունենալով:
- 3.- Պատրիարքական Աթոռներու ինքնավարման ամբողջական ճանաչում: Պատրիարքական Աթոռներու միաբանութեանց կողմէ ընտրուած Եպիսկոպոսականալու արժանի թեկնածուներ կրնան նաեւ ձեռնադրուիլ Կիլիկիոյ կաթողիկոսներուն կողմէ: Ասիկա ո'չ մէկ ձեւով կը նսեմացնէ Էջմիածնի՝ նախամեծար Աթոռ ըլլալու հանգամանքը:
- 4.- Սփիւռքի բոլոր թեմերուն մէջ, հոգեւոր ծառայութեան թեկնածուներ ապահովել բոլոր Նուիրապետական Աթոռներէն, առանց խտրութեան, նկատի ունենալով միայն տուեալ հոգեւորականին արժանիքներն ու պատրաստութիւնը: Չմոռնանք յիշեցնելու որ, խորհրդային

իշխանութեան տարիներուն, Էջմիածնի սփիւռքեան թեմերու մէջ առաջնորդական կամ հովուական պաշտօններ վարեցին՝ Երուսաղէմի, ինչպէս նաեւ եւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Նախկին» միաբաններ:

5.- Առաջնորդական թեկնածուներու ընտրութիւնը ձգուի գաղութին, եւ չպարտադրել թեկնածուներ, որոնք չունին պատրաստութիւնը ստանձնելու նման կարեւոր պաշտօններ: Մերժումի պարագային, կաթողիկոսը պարտաւոր է տրամաբանական բացատրութիւն տալ:

6.- Ազատ թողուլ միաբաններ, որոնք կը փափաքին ծառայել այլ Նուիրապետական Աթոռէ ներս, առանց խախտելու կարգ ու կանոնը, եթէ կը հաւատանք որ եկեղեցին մէկ է:

7.- Ազատ կամքի ըմբռնողութենէն մեկնելով, չկարգալուծել միաբաններ որոնք կ'երթան եւ կը միանան Կաթողիկէ Եկեղեցւոյ, եւ նոյն ձեւով լայնատարած ձեռքերով ընդունիլ բոլոր անոնք որոնք կը փափաքին Հայց. Եկեղեցւոյ միանալ: Քրիստոսի եկեղեցին մէկ է:

8.- Կրօնական դատաստանական խորհուրդ մը ստեղծել, որ պիտի զբաղի եկեղեցականներու հարցերով եւ չթողուլ որ կաթողիկոսներ առանձինս վճիռ արձակեն եւ պարտադրեն իրենց կամքը, այլ միայն վաւերացնեն դատական մարմնի որոշումը:

Հոս կ'արժէ փոքրիկ շեղում մը կատարել եւ յիշեցնել որ կաթողիկոսը թէեւ եպիսկոպոսապետ է, սակայն երբեք պետք չէ կարծէ, ըստ աւետարանական սկզբունքներուն, որ իր բացարձակ իշխանութեան տակ պիտի ունենայ բոլոր եպիսկոպոսները: Գիտենք որ Պօղոս Առաքեալ զանազանութիւն չի դներ նոյն իսկ եպիսկոպոսներու եւ երէցներու միջեւ: Ժամանակի թաւալումով անհրաժեշտութիւն ստեղծուեցաւ «վերատեսուչ» մը (յունարէն՝ episkopos – հայ.՝ եպիսկոպոս) կարգելու առաքելական գործերու բարւոք ընթացքին համար: Միայն երկրորդ դարուն էր որ եպիսկոպոսներ կարեւորութիւն ստացան որպէս նուիրապետական բարձրագոյն կարգ, սարկաւագութեան եւ քահանայութեան աստճաններէն ետք: Եւ սակայն սուրբգրային ճշմարտութիւնը կը մնայ անփոփոխ – եպիսկոպոսութենէ վեր կարգ կամ աստիճան չկայ եկեղեցւոյ մէջ, թէեւ եպիսկոպոսի մը կրնայ տրուիլ աւելի լայն **վարչական** պատասխանատուութիւն, զոր ներկայիս կը տեսնենք կաթողիկոսական պաշտօնին մէջ, որ Էապէս վարչական բնոյթ կրող պաշտօն մըն է: Հետեւաբար կրնանք ըսել որ կաթողիկոսը կամ եպիսկոպոսապետը պարզապէս առաջինն է հաւասարներու մէջ:

Դարձեալ, կ'արժէ յիշեցնել որ կաթողիկոսութեան թեկնածուն՝ պայման չէ որ անպայման եպիսկոպոս ըլլայ: Պատմութենէն գիտենք որ Գրիգոր Լուսաւորիչ՝ եպիսկոպոս չէր երբ ընտրուեցաւ կաթողիկոս եւ ո'չ ալ Ներսէս Պարթեւ, որ պալատական աշխարհական մըն էր երբ կոչուեցաւ կաթողիկոսութեան: Հետեւաբար կարելի է ընտրել անձ մը որ խոր գիտութիւն ունի մեր եկեղեցւոյ վարդապետութեան եւ աստուածաբանութեան, օժտուած վարչական ձիրքերով, սիրուած իր ժողովուրդէն, եւ անշուշտ պիտի ուզէի քայլ մը առաջ երթալ եւ ըսել՝ նոյնիսկ ամուսնացեալ քահանան, որ կը լրացնէ վերեւ յիշատակուած արժանիքները, եպիսկոպոս ձեռնադրուելէ ետք, կարող է կաթողիկոս ընտրուիլ. «*իրականութիւն է թէ այլեւս հասած է ամուսնաւոր հոգեւորականներուն առջեւ եկեղեցական յառաջացումի եւ վարչական ընդլայնման ժամը: Չայդ կը*

պահանջէ ոչ՝ միայն դարուն ոգին, այլ մանաւանդ ներքնապէս եկեղեցական ուժաւորման հարկը, ու ատոր չեն հակառակիր ոչ կրօնքին հոգին, եւ ոչ մեր Եկեղեցւոյ նախկին եւ նոյնիսկ ներկայ իրաւաբանութիւնը» (Թորգոմ Պատրիարք Գուշակեան):

Ահաւասիկ անլոյծ մնացած մարտահրաւերներ մեր ժողովուրդին առջեւ ծառացող: Պիտի կրնա՞նք քաջութիւնը ունենալ հաւաքուելու կլոր սեղանի շուրջ եւ լուծելու մեր տարակարծութիւնները, որոնք մինչեւ այսօր մեզ բաժանեալ պահեցին: Յանուն մեր նահատակներուն՝ պարտաւոր ենք, ապա թէ ոչ պատմութիւնը ածխամատիտով պիտի գրէ մեր մասին: Այ՛ո, ՄԷԿ ԱԶԳ, ՄԷԿ ԵԿԵՂԵՑԻ այսօր եւ յաւիտեան

